ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ

Ստուգաթերթ N 33

Վարսավիրանոցների և գեղեցկության սրահների այլ ծառայություններ

(ՏԳՏԴ ծածկագիր՝ 96.02.0)

_____ _____ _____
(տեսչության տարածքային մարմնի անվանումը) (գտնվելու վայրը) (հեռախոսահամարը)

_____ _____
(ստուգող անձի պաշտոնը) (ազգանունը, անունը, հայրանունը)

_____ _____
(ստուգող անձի պաշտոնը) (ազգանունը, անունը, հայրանունը)

_____ _____
(ստուգող անձի պաշտոնը) (ազգանունը, անունը, հայրանունը)

Ստուգման սկիզբը (ամսաթիվը)՝ _____ ավարտը՝ _____

_____ _____
(տնտեսավարող սուբյեկտի անվանումը) (ՀՎՀՀ-ն)

_____ _____
(տնտեսավարող սուբյեկտի գտնվելու վայրը) (հեռախոսահամարը)

_____ _____
(տնտեսվարող սուբյեկտի ղեկավարի կամ լիազորված անձի ազգանունը, անունը, հայրանունը) (հեռախոսահամարը)

Ստուգման հանձնարարագիր _____ ում կողմից _____ երբ է տրված _____

Ստուգման նպատակը /Ընդգրկված հարցերի համարներ _____

N	Հարց	այո	ոչ	չ/պ	կշիռ	հղում նորմատիվ ակտին	Ստուգման մեթոդ	Մեկնաբանություն
1	Գեղեցկության սրահի արտադրական տարածքներում մատուցվում են միայն սանիտարական նորմերով սահմանված ծառայություններ. **նշում 1**				3	Հղում 1, կետ 1.2	տեսողական	
2.	Գեղեցկության սրահի սպասասրահում չի տեղակայված սննդի օբյեկտ և չի կազմակերպված սննդի ծառայություն:				3	Հղում 1, կետ 1.2	տեսողական	
3.	Գեղեցկության սրահներում չեն իրականացվում բուժակոսմետիկ միջամտություններ հիվանդությունների բուժման և մաշկի կոսմետիկ թերությունների (դեմքի և մաշկի սեբորեա, խալեր, հիպերտրիխիոզ, բարորակ նորագոյացություններ և այլ մաշկային հիվանդություններ) վերացման համար:				3	Հղում 1, կետ 1.3	Տեսողական, հարցում	
4.	Գեղեցկության սրահը տեղակայված չէ նկուղային հարկում: **նշում 2**				3	Հղում 1, կետ 2.1.	տեսողական	
5.	Ապահովված են անձնակազմին հատկացված տարածքով:				1	Հղում 1, կետ 2.2.	Փաստաղթային՝ տարածքի հատակագիծ կամ տարածքի չափագրում	
6.	Գեղեցկության սրահը ապահովված է սառը ջրով:				3	Հղում 1, կետ 3.1	տեսողական	
7.	Գեղեցկության սրահը ապահովված է տաք ջրով:				3	Հղում 1, կետ 3.1	տեսողական	

8.	Գեղեցկության սրահը ապահովված է ջեռուցմամբ:				1	Հղում 1, կետ 3.1	տեսողական	
9	Ապահովվում է գեղեցկության սրահի նորմատիվ միկրոկլիման: **նշում** 3				2	Հղում 1, կետ 3.2	գործիքաչափում	
10.	Գեղեցկության սրահի արհեստական լուսավորվածությունը ըստ գործիքաչափման արդյունքների համապատասխանում է նորմին: **նշում** 4				2	Հղում 1, կետ 3.3	գործիքաչափում	
11.	Գեղեցկության սրահի ամբողջ տարածքում աշխատանքային օրվա ընթացքում կատարվում է ընթացիկ ախտահանում՝ ՀՀ առողջապահության նախարարության կողմից սահմանված կարգով թույլատրված լուծույթներով՝ օգտագործման հրահանգին համապատասխան:				2	Հղում 1, կետ 4.1	Տեսողական, հարցում	
12.	Ախտահանման ենթակա մակերեսներից վերցված լվացուկների մանրէաբանական հետազոտության արդյունքում շեղումներ չեն արձանագրվել:				3	Հղում 1, կետ 4.1	լաբորատոր	
13.	Կտրված մազերը հավաքված են պարկերում:				2	Հղում 1, կետ 4.2	Տեսողական	
14	Կտրված մազերով հավաքված պարկերը տեղադրված են դույլերում:				1	Հղում 1, կետ 4.2	Տեսողական	
15.	Դույլերը ունեն կափարիչ:				1	Հղում 1, կետ 4.2	Տեսողական	
16.	Մազերի և կենցաղային թափոնների աղբահանումը կատարվում է ամեն օր:				2	Հղում 1, կետ 4.2	Տեսողական	
17.	Գեղեցկության սրահում տարին 2 անգամ իրականացվում են դեզինֆեկցիոն-դեռատիզացիոն աշխատանքներ:				1	Հղում 1, կետ 4.3	Տեսողական, Փաստաղթային	
18.	Գեղեցկության սրահների աշխատակիցները (վարսահարդարներ, մանիկյուրի, պեդիկյուրի, կոսմետիկ միջամտությունների վարպետներ) աշխատանքի ընթացքում կրում են				2	Հղում 1, կետ 4.4	Տեսողական	

	աշխատանքային արտահագուստ:							
19.	Յուրաքանչյուր հաճախորդի սպասարկման համար ապահովված են անհատական օգտագործման սպիտակեղենով, այդ թվում՝ պենյուարով անձեռոցիկներով սրբիչներով:				3	Հղում 1, կետ 4.5	Տեսողական	
20.	Յուրաքանչյուր հաճախորդի սպասարկման համար ապահովված են ախտահանված գործիքներով:				2	Հղում 1, կետ 4.5	Տեսողական, լաբորատոր	
21.	Գործիքներից վերցված լվացուկների հետազոտության արդյունքում շեղումներ չեն արձանագրվել:				3	Հղում 1, կետ 4.5, 4.6	լաբորատոր	
22.	Մկրատների, մանիկյուրի /ոչ կտրող, ծակող/ գործիքների պլաստմասսայե առարկաների /խոզանակներ, սանրեր/ ախտահանման համար օգտագործում են սահմանված մեթոդներից որևէ մեկը կամ ՀՀ առողջապահության նախարարության կողմից սահմանված կարգով թույլատրված լուծույթներ, սարքեր՝ օգտագործման հրահանգին համապատասխան: **նշում 5**				3	Հղում 1, կետ 4.6	Տեսողական, հարցման միջոցով	
23.	Պեդիկյուրի վաննաները լվացվում և ախտահանվում է սահմանված կարգով: **նշում 6**				3	Հղում 1, կետ 4.6	Տեսողական, հարցման միջոցով	
24.	Էլեկտրական մեքենաների կտրող մասերը ախտահանվում է սահմանված կարգով: **նշում** 7				2	Հղում 1, կետ 4.6	Տեսողական, հարցման միջոցով	
25.	Մանիկյուրի բաժակները, սեղմակները և վարսափաթաթակները մաքրվում և լվացվում են սահմանված կարգով: **նշում 7**				2	Հղում 1, կետ 4.6	Տեսողական, հարցման միջոցով	

26.	Մաշկի ամբողջականության խախտմամբ և դրա խորանիստ շերտերի ներգրավմամբ կոսմետիկ միջամտությունների (դեմքի մաշկի հիգիենիկ մաքրում, էպիլյացիա), մանիկյուրի, պեդիկյուրի կատարման համար օգտագործվող ծակող և կտրող գործիքները ենթարկվում են մանրակրկիտ լվացման՝ լվացող և ախտահանիչ նյութերի օգտագործմամբ:				3	Հղում 1, կետ 4.7	Տեսողական, հարցման միջոցով	
27.	Մաշկի ամբողջականության խախտմամբ և դրա խորանիստ շերտերի ներգրավմամբ կոսմետիկ միջամտությունների (դեմքի մաշկի հիգիենիկ մաքրում, էպիլյացիա), մանիկյուրի, պեդիկյուրի կատարման համար օգտագործվող ծակող և կտրող գործիքները լվանալուց և ախտահանելուց հետո ենթարկվում են մանրէազերծման՝ չոր օդային, քիմիական եղանակներով կամ ՀՀ առողջապահության նախարարի կողմից սահմանված կարգով թույլատրված լուծույթներով, սարքերով՝ օգտագործման հրահանգին համապատասխան: **նշում 8**				3	Հղում 1, կետ 4.7	Տեսողական, հարցման միջոցով լաբորատոր	
28.	Գործիքներից վերցված լվացուկների մանրէազերծվածության վերաբերյալ հետազոտության արդյունքում շեղումներ չեն արձանագրվել:				3	Հղում 1, կետ 4.7	լաբորատոր	
29.	Ապահովված են առաջին բուժօգնության դեղորայքով և միջոցներով:				2	Հղում 1, կետ 4.8	Տեսողական	
30	Մազերի գանգրացման և ներկման համար օգտագործվող նյութերի նկատմամբ կատարվում է կենսաբանական փորձ: **նշում 9**				2	Հղում 1, կետ 4.9	Տեսողական, հարցման միջոցով	
31.	Մազի քիմիական գանգրացումը և ներկումը վարսահարդարը կատարում է ռետինե				2	Հղում 1, կետ	Տեսողական	

	ձեռնոցներով:					4.10		
32.	Խմելու ջրի որակը պահուստային տարողության առկայության դեպքում համապատասխանում է սանիտարական նորմերի և կանոնների պահանջներին: **նշում 10**				3	Հղում 3, կետ 2.1	լաբորատոր	
33.	Վարսահարդարները, ոտնահարդարները, մատնահարդարները և դիմահարդարները ունեն առողջական վիճակի պարտադիր նախնական (աշխատանքի ընդունվելիս) և պարբերական բժշկական զննության գրքույկ: **նշում 11**					Հղում 4, Հավելված 2, կետ 15	փաստաթղթային	
33.1	Բժշկական զննության գրքույկը համապատասխանում է պահանջվող ձևին:				1	Հղում 4, Հավելված 2, կետ 15	փաստաթղթային	
33.2.	Պահպանվում է բժշկական զննության հետազոտությունների ծավալները:				1	Հղում 4, հավելված 2, կետ 15	փաստաթղթային	
33.3	Պահպանվում է բժշկական զննության հետազոտությունների պարբերականությունը:				1	Հղում 4, Հավելված 2, կետ 15	փաստաթղթային	
34.	Սանհանգույցը /զուգարանը/ ապահովված է լվացարանով:				2	Հղում 5, կետ 9, 12	Տեսողական	
35.	Զուգարանի լվացարանը ունի արմնկային կամ ոտնակային կառավարման ծորակ կամ էլ առանց ծորակի կառավարման հարմարանքի՝ զգայական (սենսոր) կառավարմամբ:				2	Հղում 5, կետ 19	Տեսողական	
36.	Զուգարանի լվացարանին կից դրված է հեղուկ օճառ:				2	Հղում 5, կետ 26	Տեսողական	

37.	Զուգարանի խցիկներում կան կենցաղային աղբի կուտակման աղբանոթներ:				1	Հղում 5, Կետ 26	Տեսողական	
38.	Աղբանոթները կափարիչի ոտնակային հարմարանքով են:				1	Հղում 5, Կետ 36	Տեսողական	
39.	Կենցաղային աղբը կուտակում են աղբարկղներում տեղադրված պոլիէթիլենային տոպրակներում:				2	Հղում 5, Կետ 36	Տեսողական	
40.	Զուգարանը ապահովված է օդի արտածգման մղանցքով կամ օդանցքով:				1	Հղում 5, կետ 11	Տեսողական	
41.	Զուգարանը ունի ջրահեռացման կենտրոնացված համակարգ կամ կեղտաջրերի մաքրման տեղային կառույց:				2	Հղում 5, կետ 15	Տեսողական, փաստաթղթային	
42.	Զուգարանի պատերը և հատակը պատված են հեշտ լվացվող, հարթ և ջրանթափանց նյութերով (կերամիկական և մետլախե սալիկներ, մարմարի փշրանքով մոզաիկ հատակ):				2	Հղում 5, կետ 14, 25	Տեսողական	
43.	Զուգարանի պատերը և հատակը ապահովված են ամբողջական, հարթ մակերեսներով:				2	Հղում 5, կետ 14, 25	Տեսողական	
44.	Զուգարանի սենքերը և սարքավորումները պահվում են մաքուր վիճակում՝ սենքերի պատերին, հատակին և սարքավորումների մակերեսներին չկան տեսանելի աղտոտվածության հետքեր կամ հատակի մակերեսին ջրակուտակումներ, խոնավություն:				2	Հղում 5, Կետ 31, 33, 34	Տեսողական,	
45.	Զուգարանի զուգարանակոնքերի ջրի տակառիկները և մյուս սարքավորումները շահագործվում են սարքին վիճակում:				2	Հղում 5, Կետ 38	Տեսողական	
46.	Զուգարանների զուգարանակոնքերի ջրի տակառիկները և լվացարանները ապահովված են				2	Հղում 5, Կետեր՝ 15, 39	Տեսողական	

	մշտական հոսող ջրով:							

Հղում 1 ՀՀ առողջապահության նախարարի 29.11.2002թ. N 804 հրամանով հաստատված «Գեղեցկության սրահներին ներկայացվող» N 2-III-2.2.3 սանիտարական կանոններ

Հղում 2 ՀՀ առողջապահության նախարարի 06.03.02թ. N 138 հրամանով հաստատված «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2.III-11.3 սանիտարական նորմեր

Հղում 3 ՀՀ առողջապահության նախարարի 25.12.02 թ. N 876 հրամանով հաստատված «Խմելու ջուր: Ջրամատակարարման կենտրոնացված համակարգերի ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ: Որակի հսկողություն» N 2-III-Ա 2-1 սանիտարական նորմեր և կանոններ,

Հղում 4 ՀՀ կառավարության 2003թ. մարտի 27-ի «Առողջական վիճակի պարտադիր նախնական (աշխատանքի ընդունվելիս) և պարբերական բժշկական զննության կարգը, գործունեության ոլորտների, որոնցում զբաղված անձինք ենթակա են առողջական վիճակի պարտադիր բժշկական զննության և բժշկական զննության ծավալի ու հաճախականությունների ցանկը և անձնական սանիտարական (բժշկական) գրքույկի ու բժշկական զննության ենթակա անձանց անվանացանկի ձևերը հաստատելու մասին» թիվ 347-Ն որոշում

Հղում 5 ՀՀ առողջապահության նախարարի 16.04.2009թ. N06-Ն հրամանով հաստատված «Հասարարական զուգարաններին ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N2.III-2.13 սանիտարական կանոններ և նորմեր

նշում 1 - մազերի լվացում, կտրում, հարդարում, ներկում, գանգրացում և համանման աշխատանքներ, սափրում և մորուքի հարթում,

- դեմքի մերսում, մանիկյուր, պեդիկյուր, դիմահարդարում և այլն (դեմքի մաշկի հիգիենիկ մաքրում, բեղերի և թարթիչների ներկում, էպիլյացիա):

նշում 2 Պահանջը սահմանված է «Հասարակական շենքեր և կառուցվածքներ» N2.08.02-89 ՍՆիՊ, Հավելված 4-ում: Եթե կիսանկուղային հարկի հատակը գտնվում է փողոցի ծածկույթից ոչ ավել քան 0.5 մ ցածր, ապա թույլատրվում է տեղակայել:

նշում 3. Նորմավորվում է «Ջեռուցում, օդափոխություն և օդի լավորակում» ՀՀ ՇՆ IV-12.01-2000 շինարարական նորմեր, Հավելված 1-ով: Տարվա սառը եղանակին (օրվա միջին ջերմաստիճանը +10 ^{0}C և ցածր) օդի ջերմաստիճանը 18-22 ^{0}C է, օդի շարժման արագությունը՝ ոչ ավել՝ 0,2 մ/վրկ, տաք եղանակին՝ (օրվա միջին ջերմաստիճանը +10 ^{0}C և բարձր) 28^{0}C-ից ոչ ավել է, օդի շարժման արագությունը՝ 0,5 մ/վրկ-ից ոչ ավել, օդի հարաբերական խոնավությունը՝ ոչ ավել 65%:

նշում 4. Ընդհանուր լուսավորման դեպքում- 400 ԼՔ, համակցվածի դեպքում՝ 500/300 ԼՔ, բնական լուսավորվածությունը՝ վերին կամ համակցված լուսավորման դեպքում ԲԼԳ -2,1, իսկ կողային լուսավորման դեպքում ԲԼԳ՝ 0,7:

նշում 5. Մկրատների, մանիկյուրի գործիքների ախտահանման համար՝

ա) ընկղմում են ոչ պակաս, քան 70% սպիրտի մեջ՝ (հիդրոլիզային կամ դենատուրացված) 50 րոպե տևողությամբ: Սպիրտը լցված է լայնաբերան կափարիչով փակվող ոչ պակաս 100 մլ տարողությամբ անոթի մեջ: Սպիրտի ծախսը յուրաքանչյուր հաճախորդի համար ոչ պակաս, քան 1 գրամ է:

բ) 3 % քլորամինի լուծույթի մեջ՝ 60 րոպե տևողությամբ

գ) ջրածնի պերօքսիդի 3% լուծույթի մեջ՝ 180 րոպե տևողությամբ,

Պլաստմասսայե առարկաների ախտահանման համար՝ խոզանակները, սանրերը ախտահանվում են, ընկղմելով 1-%-անոց քլորամինի լուծույթի մեջ՝ 30 րոպե տևողությամբ: Քլորամինի լուծույթը լցված է կափարիչով պլաստմասայե անոթի մեջ և փոխվում է 5 օրից ոչ պակաս հաճախականությամբ:

նշում 6. Պեդիկյուրի վաննաները լվացվում է տաք ջրով՝ սպունգով և օճառով, որից հետո ախտահանվում 1%-անոց քլոր-բետա-նաֆտոլի կամ 5%-անոց քլորամինի լուծույթով՝ 10 րոպե տևողությամբ կամ ջրածնի պերօքսիդի 3% լուծույթի մեջ՝ 30 րոպե տևողությամբ:

նշում 7. Էլեկտրական մեքենաների կտրող մասերը եռացվում են կամ ախտահանվում ջրածնի պերօքսիդի 3% լուծույթի մեջ՝ 30 րոպե տևողությամբ, իսկ պլաստմասսայե պատյանները շփվում են 0.5 %-անոց քլորամինի լուծույթով:

Մանիկյուրի բաժակները մաքրվում են մեխանիկական եղանակով, լվացվում հոսող տաք ջրում օճառով կամ սոդայով, կամ ընկղմվում եռման ջրի մեջ: Սեղմակները և վարսափաթաթակները հերթափոխի վերջում մաքրվում և լվացվում են տաք օճառային ջրով:

նշում 8. Լվացման և մանրէազերծման եղանակները համապատասխանում են բժշկական գործիքների համար պահանջվող լվացման և մանրէազերծման /չոր օդային կամ քիմիական/ եղանակներին, այդ թվում՝ քիմիական եղանակով մանրէազերծում են՝ գործիքները ընկղմելով ջրածնի պերօքսիդի 6% լուծույթի մեջ 60 րոպե տևողությամբ:

նշում 9. Այդ նպատակով հաճախորդի մաշկին (ականջի ետևում կամ թևի ներսային ծալքում) քսվում է տվյալ նյութից, 10-15 րոպե հետո առաջացած կարմրությունը վկայում է օրգանիզմի գերզգայունության մասին տվյալ նյութի նկատմամբ, ուստի օգտագործումը արգելվում է:

նշում 10. ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՄԱՆՐԷԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՄԱԿԱԲՈՒԾԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՆՈՐՄԵՐ

Ցուցանիշներ	Չափման միավորներ	Նորմաներ
Ջերմատոլերանտ կոլիֆորմ մանրէներ 1/	100 մլ-ում մանրէների քանակ	Բացակայություն
Ընդհանուր կոլիֆորմ մանրէներ	100 մլ-ում մանրէների քանակ	Բացակայություն
Մանրէների ընդհանուր քանակություն	Գաղութներ առաջացնող մանրէների քանակը 1 մլ-ում	50-ից ոչ ավել
կոլիֆագեր 3/	Վահանակ առաջացնող միավորների (ՎԱՄ) քանակը 100 մլ-ում	Բացակայություն

Սուլֆիտվերականգնող կլոստրիդիաների սպորներ 4/	Սպորների քանակը 20 մլ-ում	Բացակայություն
Լյամբլյաների ցիստեր 3/	Ցիստերի քանակը 50 մլ-ում	Բացակայություն

ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ԶԳԱՅՈՐՈՇԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՆՈՐՄԵՐ

Ցուցանիշներ	**Չափման միավորներ**	**Նորմեր, ոչ ավելի**
Հոտ	բալեր	2
Համ	-//-	2
Գունավորում	աստիճաններ	20 /35/ 1)
Պղտորություն	ՖՊՄ (ըստ ֆորմազինի) պղտորության միավոր կամ մգ/լ (ըստ կաոլինի)	2.6 /35/ 1) 1.5 /2/ 1)

նշում 11 Թերապևտի /ընտանեկան բժշկի զննում/՝ աշխատանքի ընդունվելիս և հետագայում կիսամյակը 1 անգամ

Մաշկավեներաբանի զննում՝ աշխատանքի ընդունվելիս և հետագայում կիսամյակը 1 անգամ

Հետազոտություններ պալարախտի նկատմամբ՝ աշխատանքի ընդունվելիս և հետագայում տարին 1 անգամ

Արյան հետազոտություն՝ սիֆիլիսի, քսուք (քերուկ) սուսանակի, տրիխոմոնազի, քլամիդիոզի, ուրեոպլազմոզի նկատմամբ՝ աշխատանքի ընդունվելիս և հետագայում կիսամյակը 1 անգամ

Հետազոտություն աղիքային վարակիչ հիվանդությունների նկատմամբ (մանրէակրություն)՝ աշխատանքի ընդունվելիս և հետագայում կիսամյակը 1 անգամ

Հետազոտություններ հելմիթակրության նկատմամբ՝ աշխատանքի ընդունվելիս և հետագայում կիսամյակը 1 անգամ:

Մատնահարդարները, դիմահարդարները և ոտնահարդարը անցնում են նաև՝ հետազոտություն ավստրալիական հակածնի նկատմամբ՝ արյան շճաբանական մեթոդով:

Տեսուչի ստորագրություն _____ Տնտեսվարողի ստորագրություն _____